ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՐԴԻԹԵՐ ՋԱՆԻԲԵԿԻ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լաուրա Թոռնիկի Ասատրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ **Ժաննա Հարությունի Պայլոզյան**

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Աննա Լևոնի Մինասյան**

Առաջատար կազմակերպություն՝ Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022թ. հոկտեմբերի 27-ին՝ ժամը 12:00-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք.Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2022թ.-ի սեպտեմբերի 14-ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Անհատական մոտեցման սկզբունքի իրականացումը հանրակրթական դպրոցում ուսուցման արդյունավետության բարձրացման առաջնային հիմնախնդիրներից մեկն է:

Բազմաթիվ գիտական աշխատանքներ կան այն մասին, որ հանրակրթության պայմաններում ուսումնական գործընթացը պետք է արդյունավետ լինի յուրաքանչյուր աշակերտի համար, և քանի որ աշակերտներն իրենց պահանջմունքներով, հետաքրքրություններով, հակումներով, ինչպես նաև ֆիզիոլոգիական և հոգեբանական մի շարք առանձնահատկություններով տարբեր են, ուստի՝ ուսումնական գործընթացի արդյունավետությունն էապես պայմանավորված է անհատական մոտեցման սկզբունքի իրականացմամբ:

Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման անհրաժեշտության մասին է խոսվում նաև ՀՀ հանրակրթության մասին օրենքում, որտեղ նշված է, որ հանրակրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի՝ մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, մարդկային արժանապատվության պահպանմանը, իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը և այլն:

Մասնավորապես, տարրական դպրոցում անհատական մոտեցման սկզբունքն իր ուրույն դերն ու կարևորությունն ունի, քանի որ հենց այս փուլում են ձևավորվում երեխայի հետագա կյանքի համար հիմնարար նշանակություն ունեցող մի շարք կարողություններ, հմտություններ, հոգեբանական և ֆիզիոլոգիական նորագոյացություններ:

Արդի հանրակրթական դպրոցներում գործում է Յ.Ա.Կոմենսկու կողմից առաջադրված դաս-դասարանային համակարգը, սակայն միևնույն ժամանակ, ժամանակակից մանկավարժներն առաջադրում են ուսուցման կազմակերպման նոր մոտեցումներ, տեխնոլոգիաներ և այլն: Սակայն, նկատենք, որ դաս-դասարանային համակարգում այդ ամենի կիրառությունից հետո էլ, անհատական մոտեցման սկզբունքի հիմնախդիրը դեռևս չի հանգուցալուծվել:

Ակնհայտ է նաև, որ չնայած մանկավարժների կողմից վերոնշյալ սկզբունքի իրականացման կարևորության և անհրաժեշտության գիտակցվածությանը, դեռևս կան բազմաթիվ դժվարություններ, խոչընդոտներ, որոնք գրեթե ուսումնասիրված և բացահայտված չեն, հետևաբար մշակված չեն նաև դրանց հաղթահարման ուղիները, ինչն էապես թույլ չի տալիս դիտարկվող սկզբունքը լիարժեքորեն իրականացնել տարրական դպրոցում: Վերջինս առավել արդիական է դարձնում ընտրված թեման:

Հետազոտական թեմայի մշակվածության աստիճանը:

Դիդակտիկայում ուսուցման սկզբունքներին տարբեր տեսանկյուններից

անդրադարձել են գրեթե բոլոր ժամանակների մանկավարժ-գիտնականները, սակայն դրանց զարգացման գործընթացում առանձնահատուկ ներդրում ունեն հայտնի մանկավարժներ՝ Ա. Շիրակացին, Դ. Անհաղթը, Գ. Մագիստրոսը, Յ.Ա. Կոմենսկին, Յ.Կ. Բաբանսկին, Յ.Հ. Պեստալոցցին, Ա. Դիստերվերգը, Կ.Դ. Ուշինսկին, Պ.Ի. Պիդկասիստին, Մ.Ա. Դանիլովը, Ն.Մ. Գորլենկոն, Ա.Ս. Գրանիցկայան, Մ.Ն. Սկատկինը, Ե.Ս. Ռաբունսկին, Տ.Մ. Կովալյովան և այլք:

Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաների և մեթոդիկաների ուսումնասիրմանն անդրադարձել են Պ.Պ Բլոնսկին, Վ.Ֆ. Շատալովը, Վ. Գուզեևը, Գ.Կ. Սելևկոն, Ի.Է. Ունտը, Մ.Վ. Կլարինը, Ի.Մ. Օսմոլովսկայան, Ն.Մ. Շախմաևը, Օ.Գ. Գրոխոլսկայան, Ի.Յա. Լերները, Ե.Ա. Ալեքսանդրովան, Մ.Վ. Մինովան,Վ.Կ. Դյաչենկոն, Մ.Ա. Մկրտչյանը, Ե.Գ. Չեռնենկոն, Վ.Պ. Սիմոնովը, Յու. Տրոիցկին, Բ.Ս. Բլումը, Ռ.Մ. Թոմասը, Շ.Մ. Թոմասը, Ռ. Դոտտրենսը և այլք:

Հոգեբանության ոլորտում անձի անհատական առանձնահատկությունների և դրանց բացահայտման նպատակով տարատեսակ մեթոդաբանական մոտեցումների, տեսական դրույթների առաջադրման գործում մեծ ներդրում ունեն Վ.Ս.Վիգոտսկին, Դ.Բ. Էլկոնինը, Վ.Վ. Դավիդովը, Կ.Պ. Պրիբռամը, Ջ.Միլլերը, Յու. Գալանտերը, Զ.Ի. Կալմիկովան, Յու.Ն. Կուլյուտկինը, Ա.Ն. Բելովան, Ա.Զ. Զակը, Ա.Ա.Պլիգինը և այլք:

Հետզոտության նպատակը տարրական դպրոցում անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարությունների բացահայտումն ու դրանց հաղթահարման ուղիների առաջադրումն է:

Հետազոտության օբյեկտը ՀՀ տարրական դպրոցի ուսուցման գործընթացն է:

Հետազոտության առարկան ՀՀ տարրական դպրոցում անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարությունների հաղթահարման ուղիներն են:

Հետազոտության գիտական վարկածն այն ենթադրության մեջ է, որ անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնախնդիրը արդյունավետորեն կլուծվի, եթե՝

1. Ճշգրտվեն և նորովի սահմանվեն «ուսուցման սկզբունք», «ուսուցման անհատական մոտեցման սկզբունք» և դրանց հետ առնչվող այլ հասկացություններ:
2. Ուսուցման սկզբունքները դասակարգվեն ըստ բնույթի և հստակեցվեն դրանք իրականացնող սուբյեկտները: Բացահայտվեն անհատական մոտեցման սկզբունքի բնույթը, առանձնահատկություններն ու այն իրականացնող սուբյեկտը:
3. Բացահայտվեն անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հնարավորություններն ու խոչընդոտները դաս-դասարանային համակարգի շրջանակներում:
4. Կոլեկտիվ ուսումնական պարապմունքները դիտարկվեն որպես

անհատական մոտեցման սկզբունքի իրականացման համակարգաձևավորող գործոն:

5. Մշակվի և տարրական դպրոցում ներդրվի անհատական մոտեցման սկզբունքի իրականացումն ապահովող ուսուցման գործընթացի կազմակերպման նոր, արդյունավետ մոդել:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել և վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ հայ և արտասահմանյան գիտական գրականությունը, անհատական մոտեցման սկզբունքի իրականացմանն ուղղված միջազգային փորձը, նորարարական մոտեցումները և պարզաբանել դրանց իրացման հնարավորություններն ու սահմանափակումները տարրական դպրոցում,
2. ուսումնասիրել, ճշգրտել և նորովի սահմանել «ուսուցման սկզբունք», «ուսուցման անհատական մոտեցման սկզբունք» և «ուսուցման անհատականացում» հասկացությունները,
3. բացահայտել անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնական դժվարությունները տարրական դպրոցում և գործող ուսուցիչների պատկերացումներն ու մոտեցումները անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարությունների և կիրառվող մոտեցումների վերաբերյալ,
4. ուսումնասիրել և լուսաբանել տարրական դպրոցում կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հնարավորություններն անհատական մոտեցման սկզբունքի իրականացման ուղղությամբ,
5. մշակել և ներդնել տարրական դպրոցում ուսուցման անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարությունների հաղթահարման արդյունավետ մոդել:

Հետազոտության գիտական նորույթը.

1. Առաջադրվել է ուսուցման սկզբունքների նոր դասակարգում՝ ըստ բնույթի:
2. Հստակեցվել և նորովի են սահմանվել ուսուցման «անհատական մոտեցման սկզբունք» և «ուսուցման անհատականացում» հասկացությունները:
3. Բացահայտվել են անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնական դժվարությունները, ելակետային խոչընդոտը, բնույթը և այն իրականացնող սուբյեկտը, դրա իրականացմանն ուղղված նորարարական մոտեցումների հնարավորությունները:
4. Առաջադրվել են անհատական մոտեցման սկզբունքից բխող՝ ուսուցման գործընթացի կազմակերպմանը ներկայացվող հիմնական պահանջները և բացահայտվել են կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հնարավորությունները վերոնշյալ պահանջների իրացման շրջանակներում:
5. Մշակվել և տարրական դպրոցում ներդրվել է անհատական մոտեցման սկզբունքի կիրառմամբ ուսուցման գործընթացի կազմակերպման արյունավետ մոդել:

Հետազոտության տեսական նշանակությունը. հետազոտության

արդյունքում ստացված տվյալները և դրանց հիման վրա կատարված եզրակացությունները, սահմանումներն ու առաջարկությունները նորովի են անդրադառնում հիմնախնդրին և կնպաստեն մանկավարժական գիտության զարգացմանը՝ դիդակտիկական նոր գիտելիքների, մեթոդաբանական մոտեցումների և տեսական դրույթների համալրմամբ:

Հետազոտության գործնական նշանակությունը. անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնախնդրի ելակետային հիմնահարցերի, առանձնահատկությունների բացահայտումը, առկա մոտեցումների սահանափակումների և հնարավորությունների վերհանումը, առաջարկվող լուծման ուղիները, մշակված դրույթներն ու ներկայացված մոդելը գործնական օգնություն կարող են լինել մանկավարժների, գիտնականների, կրթական հաստատությունների և այլ սուբյեկտների գործունեության համար:

Հետազոտության մեթոդաբանական հիմք ենք հանդիսացել.

- ժամանակակից դպրոցի ուսուցման գործընթացի կազմակերպման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները (Վ.Ա. Օռլով, Վ.Վ.Ֆիրսով, Վ.Մ. Մոնախով, Ֆ.Մ. Խուբիևա, Ի.Մ. Օսմոլովսկայա, Վ.Կ. Դյաչենկո, Մ.Ա. Մկրտչյան, Վ.Վ. Դավիդով, Ա.Ա. Կիրսանով և այլք),
- դիդակտիկական հասկացությունների վերաբերյալ տեսական վերլուծությունները (Յ.Ա. Կոմենսկի, Մ.Ն. Սկատկին, Յ.Կ. Բաբանսկի, Մ.Ա. Դանիլով, Ն.Մ. Գորլենկո, Վ.Դ. Շադրիկով, Ի.Է. Ունտ, Ե.Ս. Ռաբունսկի, Ն.Պ. Գուզիկ, Ա.Ա. Բուդառնի, Կ.Է. Թոմլինսոն և այլք),
- ուսուցման ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների, մեթոդների, ձևերի վերաբերյալ ժամանակակից տեսությունները (Վ.Ֆ. Շատալով, Գ.Կ. Սելևկո, Ս.Ն. Լիսենկովա, Վ.Վ.Դավիդով, Վ.Կ. Դյաչենկո, Մ.Ա. Մկրտչյան, Ա.Ս.Գրանիցկայա, Շ.Ա.Ամոնաշվիլի և այլք):

Հետազոտության մեթոդները: Առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են հետազոտության հետևյալ մեթոդները.

- տեսական մեթոդներ՝ հոգեբանամանկավարժական, մասնագիտական և մեթոդական գրականության վերլուծություն և ընդհանրացում,
- էմպիրիկ մեթոդներ՝ դիտում, թեստավորում, զրույց, հարցազրույց, արդյունքների գնահատում,
- վիճակագրական մեթոդներ՝ փորձարարական հետազոտության ընթացքում ստացված տվյալների մաթեմատիկական մշակում, արդյունքների տրամագրային պատկերում:

Պաշտպանության ներկայացվող դրույթերն են՝

1. Ուսուցման սկզբունքներն, ըստ բնույթի, լինում են՝ համընդհանուր, համակարգային կամ համակարգաստեղծ: Այդ տեսանկյունից, թե՛ համընդհանուր, թե՛ համակարգային սկզբունքներն իրենց իրականացման ձևով էապես կախվածության մեջ են գտնվում համակարգաստեղծ սկզբունքներից, վերջիններս ոչ միայն ազդում են համակարգաձևավորող գործոնների վրա, այլև

հիմք են հանդիսանում այս կամ այն ուսուցման համակարգի կառուցման համար:

2. Անհատական մոտեցման սկզբունքն իր բնույթով համակարգաստեղծ է և այն իրականացվում է համապատասխան համակարգի կառուցվացքային առանձնահատկությունների ապահովմամբ:

3. Անհատական մոտեցման սկզբունքի լիարժեք իրականացումը (անհատականացված ուսուցում), ենթադրում է ուսուցման համակարգի կառուցվածքային փոփոխություն:

4. Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնական պահանջները բավարարող կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հիման վրա կառուցվող համակարգը կարող է դիտվել որպես այս հիմնախնդրի լուծման արդյունավետ միջոց:

5. Տարրական դպրոցում ուսուցման գործընթացի կազմակերպման մեր կողմից մշակված և իրականացված մոդելը նոր համակարգի կառուցմանն ուղղված գործնական ուղեցույց է:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը: Երաշխավորվում է մանկավարժության տեսության և պատմության մանկավարժահոգեբանական գիտությունների արդի ձեռքբերումների վերլուծությամբ, փորձարկվողների մեծ քանակով, փորձարարական հետազոտությունների արդյունքների վերլուծությամբ և մաթեմատիկական մշակմամբ:

Հետազոտության փորձառնական (էմպիրիկ) հիմք են հանդիսանում՝

1. տարրական դպրոցում աշխատող (ՀՀ բոլոր մարզերից, ինչպես նաև Արցախի հանրապետությունից) 122 ուսուցիչների մասնակցությամբ իրականացված առցանց հարցման (հարցաթերթիկի միջոցով) արդյունքում ստացված տվյալները,

2. տարրական դպրոցում (Ս.Մկրտչյանի անվան «Բյուրակն» կրթահամալիրում) ուսուցման գործընթացի կազմակերպման մշակված մոդելի իրականացման արդյունքում ձեռք բերված տվյալները:

Հետազոտության հիմնական դրույթներն ու արդյունքները զեկուցումներով ներկայացվել են՝

- «Որակյալ ուսուցման հիմնախնդիրները ՀՀ հանրակրթական դպրոցներում» խորագրով գիտաժողովում (2013թ.),
- Международная научная конференция “Образование, наука и экономика в вузах и школах. Интеграция в международное образовательное пространство” (2014г.),
- «Մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները» տարածաշրջանային միջազգային գիտաժողովում (2015թ.),
- Международная научная конференция “Образование, наука и экономика в вузах и школах. Интеграция в международное образовательное пространство” (2015г.),

➢ «Կրթության և դաստիարակության խնդիրները ժամանակակից դպրոցում» խորագրով ՀՊՄՀ ուսանողական գիտական կոնֆերանսում (2015թ.),

➢ ‹‹Մաթեմատիկական կրթություն 4›› խորագրով միջազգային գիտաժողովում (2016թ.),

➢ Ս.Մկրտչյանի անվան «Բյուրակն» կրթահամալիրի կողմից կազմակերպված ‹‹Նոր կրթական իրողության կայացման հիմնարար հարցերը» խորագրով միջազգային գիտաժողում (2017թ.):

Ընդհանուր առմամբ, հետազոտության նյութերով հրատարակվել է 9 գիտական հոդված:

Հետազոտության բազա են հանդիսացել Սպարտակ Մկրտչյանի անվան «Բյուրակն» կրթահամալիրը, ՀՀ և ԱՀ տարածքում գտնվող տարբեր հանրակրթական դպրոցներ:

Գիտահետազոտական աշխատանքն իրականացվել է երեք փուլով:

Առաջին փուլում /2016-2017/ ուսումնասիրվել և վերլուծվել է հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ մանկավարժահոգեբանական գրականությունը: Դուրս են բերվել առանցքային հիմնահարցերը, ըստ որի հստակեցվել և ձևակերպվել են հետազոտության թեման, վարկածն ու խնդիրները: Նախագծվել, մշակվել է փորձարարական աշխատանքների իրականացման մեթոդիկան:

Երկրորդ փուլում /2017-2019/ նախնական տարբերակով շարադրվել է ատենախոսության բովանդակության համապատասխան մասը: Փորձարարական աշխատանքների և ստացված տվյալների արդյունքում մշակվել է անհատական մոտեցման սկզբունքի իրականացմամբ ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման մոդելը, որի բովանդակությունը շարադրվել է ատենախոսության համապատասխան ենթագլխում:

Երրորդ փուլում /2019-2022/ հստակեցվել է ատենախոսության բովանդակությունը, կազմվել է էլեկտրոնային հարցաթերթ, որի հիման վրա իրականացվել է սոցիալական ուսումնասիրություն: Արդյունքների վերլուծությունը ներկայացվել է համապատասխան ենթագլխում: Ամփոփվել և բարելավվել են ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը, ձևակերպվել են եզրակացությունները:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Հետազոտությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 112 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել են թեմայի արդիականությունը, հիմնահարցի մշակվածության աստիճանը, ներկայացվել են աշխատանքի նպատակն ու խնդիրները, մեթոդաբանական հիմքերը, աշխատանքի

տեսական և գործնական նշանակությունը, գիտական նորույթը, սահմանվել են պաշտպանության ներկայացվող դրույթները, նկարագրվել են հետազոտության իրականացման փուլերը, ներկայացվել է աշխատանքի ծավալը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Անհատական մոտեցման սկզբունքն ուսուցման սկզբունքների համակարգում», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Ուսուցման սկզբունքները: Դրանց դերն ու նշանակությունը կրթական համակարգի զարգացման գործում», վեր է հանվել երեք հիմնահարց.

1. «ուսուցման սկզբունք» հասկացության սահմանման հստակեցման,
2. ուսուցման սկզբունքների դասակարգման, տեսակավորման,
3. ուսուցման սկզբունքներն իրականացնող սուբյեկտների սահմանման անհրաժեշտություն:

Նշված հիմնահարցերի կարգավորման նպատակով հստակեցվել է մեր կողմնորոշումն «ուսուցման սկզբունք» հասկացության սահմանման վերաբերյալ, այն է՝ «Ուսուցման սկզբունքը ելակետային դրույթ է, նորմատիվային հիմք, որն ուղղված է ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը»: Առաջադրվել է ուսուցման սկզբունքների նոր դասակարգում՝ ըստ բնույթի, համաձայն որի առանձնացվել է ուսուցման սկզբունքների երեք տեսակ՝

- համընդհանուր,
- համակարգաստեղծ,
- համակարգային:

Բնութագրված են դրանց առանձնահատկությունները և կիրառման ոլորտները:

Թե՛ համընդհանուր, թե՛ համակարգային սկզբունքներն իրենց իրականացման ձևով էապես կախվածության մեջ են գտնվում համակարգաստեղծ սկզբունքներից, վերջիններս ոչ միայն ազդում են համակարգաձևավորող գործոնների վրա, այլև հիմք են հանդիսանում այս կամ այն ուսուցման համակարգի կառուցման համար: Համակարգաստեղծ և դրանից բխող համակարգային սկզբունքներն ուղղված են ուսուցման գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը կոնկրետ, հստակ սահմանված պահանջի բավարարման տեսանկյունից: Արդյունքում, կոնկրետ նպատակի պարագայում համակարգաստեղծ, հետևաբար նաև՝ համակագային սկզբունքները կարող են լինել արդյունավետ, մեկ այլ խնդրի դրվածքից ելնելով՝ անարդյունավետ: Համընդհանուր սկզբունքները մշտապես ուղղված են ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը և, որպես կանոն, ժամանակի ընթացքում համալրվում են գիտության զարգացման ձեռքբերումներով:

Ընդ որում, բնույթով տարբեր սկզբունքներ իրականացնող սուբյեկտները ևս տարբեր են: Համակարգաստեղծ սկզբունքներն իրականացվում են ուսուցման կոնկրետ համակարգի միջոցով՝ կառուցվածքային առանձնահատկությունների

ձևավորմամբ: Վերջիններով են պայմանավորված համընդհանուր և համակարգային սկզբունքներն իրականացնող սուբյեկտները:

Երկրորդ ենթագլխում՝ «Անհատական մոտեցման սկզբունքի տեղն ու դերը ուսուցման սկզբունքների համակարգում», իրականացվել է անհատական մոտեցման սկզբունքի վերաբերյալ տարբեր մանկավարժների մոտեցումների և սահմանումների վերլուծություն, որի արդյունքում բացահայտվել է, որ հասկացությունների մակարդակում տիրում է խառնաշփոթ, ինչի կարգավորման նպատակով՝ նորովի են սահմանվել «ուսուցման անհատական մոտեցման սկզբունք» և «ուսուցման անհատականացում» հասկացությունները.

Ուսուցման անհատական մոտեցման սկզբունքը ենթադրում է ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպում ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի համար, ինչն էլ իր հերթին ենթադրում է ուսուցման մյուս սկզբունքների, հոգեբանամանկավարժական տեսություններում առաջ քաշվող դրույթների անհատականացված իրականացում:

Ուսուցման անհատականացումը անցումային գործընթաց է՝ գործող համակարգից (դաս-դասարանային) անցում դեպի անհատական մոտեցման սկզբունքի իրականացման համար բոլոր անհրաժեշտ և բավարար պայմաններն ապահովող՝ ուսուցման գործընթացի կազմակերպման համապատասխան համակարգի:

Երրորդ ենթագլխում՝ «Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը», ուսումնասիրվել և վերլուծությամբ ներկայացվել են ժամանակակից մանկավարժների կողմից անհատական մոտեցման սկզբունքի իրականացմանն ուղղված և որպես տվյալ հիմնախնդրի լուծման միջոց դիտարկվող հիմնական մոտեցումները՝ իրենց հնարավորություններով և սահմանափակումներով՝

1. տարբերակված ուսուցում,
2. այլ տեխնոլոգիաներ,
3. փոխներգործուն մեթոդներ:

Ընդ որում, անհատական մոտեցման սկզբունքի իրականացմանն ուղղված նշված մոտեցումների սահմանափակումներն էապես գերազանցում են հնարավորություններին:

Մեր կողմից նոր տեսական դիրքորոշում է ցուցաբերվել մանկավարժների կողմից «տարբերակված ուսուցում»» և «անհատականացված ուսուցում» հասկացությունների միջև առկա կապերի առնչությամբ տարատեսակ, երբեմն հակասական մոտեցումների վերաբերյալ:

Երկրորդ գլուխը՝ «Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման արդյունավետ ուղիները տարրական դպրոցում», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնահարցերը ժամանակակից դպրոցում», ներկայացվել

են մանկավարժների մոտեցումներն ու տեսակետները դաս-դասարանային համակարգում անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարությունների, խոչընդոտների վերաբերյալ, որի արդյունքում հայեցակարգային մակարդակով հիմնավորվել է գործող (դաս-դասարանային) համակարգում անհատական մոտեցման սկզբունքի իրականացմանն էականորեն խոչընդոտող հանգամանքների առկայությունը*:*

Առանձնացրել ենք անհատական մոտեցման սկզբունքի իրականացման երեք տարբերակ՝ յուրաքանչյուրի համար սահմանելով նշված սկզբունքն իրականացնող սուբյեկտին.

1. ոչ նպատակաուղղված իրականացում (սուբյեկտը բացակայում է),
2. մասնակի իրականացում (սուբյեկտն ուսուցիչն է),
3. լիարժեք իրականացում (սկզբունքն իրականացվում է ուսուցման համակարգի կառուցվածքային առանձնահատկությունների ապահովմամբ):

Այստեղ հիմնավորվում է այն դրույթը, որ անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնախնդիրը կարող է հանգուցալուծվել միայն տվյալ սկզբունքի լիարժեք իրականացման պայմաններում: Այդ տեսանկյունից, նախորդ ենթագլխում նշված հայեցակարգային բոլոր մոտեցումներն, ըստ էության, ապահովում են անհատական մոտեցման սկզբունքի, առավելագույնը՝ մասնակի իրականացում, ինչը թույլ է տալիս պնդել, որ դրանք չեն կարող դիտվել որպես անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնախնդրի արդյունավետ լուծման միջոցներ:

Այստեղ հիմնավորվել է այն դրույթը, որ անհատական մոտեցման սկզբունքն իր բնույթով համակարգաստեղծ է, իսկ այն իրականացվում է համապատասխան համակարգի կառուցվացքային առանձնահատկությունների ապահովմամբ:

Երկրորդ ենթագլխում՝ «Անհատական մոտեցման սկզբունքից բխող հիմնական պահանջներն ուսումնական գործընթացում», առաջադրվել է ուսուցման գործընթացում անհատական մոտեցման սկզբունքից բխող չորս հիմնական պահանջ, որոնց բավարարման արդյունքում հնարավոր է կառուցել սկզբունքի լիարժեք իրականացումն ապահովող համապատասխան համակարգ.

1. ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի անհատական առանձնահատկությունների բացահայտման համար անհրաժեշտ պայմանների ապահովում:

2. Ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի կողմից ուսումնական նյութի յուրացման, անձի զարգացման և կրթական մյուս բոլոր նպատակների իրականացմանն ուղղված գործընթացների կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ապահովում (համապատասխան բովանդակության, ժամկետների, ձևերի, միջոցների, մեթոդների սահմանում, պլանավորում, ստուգում, գնահատում)՝ բացահայտված անհատական առանձնահատկություններին համապատասխան:

3. Ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի համար ակտիվ, գործող

սուբյեկտի կարգավիճակի ապահովում (ուսումնական գործընթացում գտնվելու արդյունքում):

4. Ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի և մյուս անդամների միջև «բնականոն» (ուսումնական գործընթացում գտնվելու արդյունքում) այնպիսի հարաբերությունների ապահովում, որոնք կնպաստեն համապատասխան բնույթի ուսումնական գործընթացի կազմակերպման, կառավարման, վերահսկման գործընթացների արդյունավետ իրականացմանը:

Երրորդ ենթագլխում՝ «Տարրական դպրոցում կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հնարավորություններն անհատական մոտեցման սկզբունքի իրականացման գործում», վերլուծությամբ ներկայացվել են կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հնարավորությունները վերոնշյալ պահանջների իրացման շրջանակներում: Արդյունքում հիմնավորվում է այն դրույթը, որ կոլեկտիվ ուսումնական պարապմունքներն ապահովում են անհատական մոտեցման սկզբունքից բխող հիմնական պահանջները, և կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հիման վրա կառուցվող համակարգը կարող է դիտվել որպես նշված հիմնախնդրի լուծման արդյունավետ միջոց:

Երրորդ գլուխը՝ «Փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծություն», բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Տարրական դպրոցների ուսուցիչների մոտեցումներն անհատական մոտեցման սկզբունքի իրականացման վերաբերյալ», ներկայացվել են էմպիրիկ մեթոդով (էլեկտրոնային հարցաթերթ) իրականացված հետազոտական աշխատանքի արդյունքները: Հետազոտությանը մասնակցել են ՀՀ բոլոր մարզերից, նաև ԱՀ-ից 122 տարրական դպրոցի ուսուցիչ: Ընդհանուր առմամբ, ուսուցիչների գերակշիռ մասը գիտակցում է անհատական մոտեցման սկզբունքի իրականացման անհրաժեշտության կարևորությունը, առանձնացնում է դրան խանգարող որոշ հանգամանքներ, նպատակաուղղված ձևով քայլեր է ձեռնարկում դրանց հաղթահարմանն ուղղված, սակայն ելակետային խնդիրը չնկատելու արդյունքում՝ հակված է կարծելու, որ եթե ուսուցիչը կամենա և կոմպետենտ մանկավարժ լինի, ապա կկարողանա դաս-դասարանային համակարգում իրականացնել անհատական մոտեցման սկզբունքը լիարժեքորեն:

Երկրորդ ենթագլխում՝ «Տարրական դպրոցում անհատական մոտեցման սկզբունքի կիրառմամբ ուսուցման գործընթացի կազմակերպման մշակված մոդելը», ներկայացվել է անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարությունների հաղթահարմանն ուղղված ուսուցման գործընթացի կազմակերպման արդյունավետ մոդել: Այն ստեղծվել է, որպես տարրական դպրոցում կոլեկտիվ ուսումնական պարապմուքնենրի հիման վրա կառուցված ուսուցման անհատականացման գործնական ուղի, որի լայնամասշտաբ իրականացումը հավակնում է դիտվել անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնախնդրի իրական լուծման տարբերակ:

Մոդելի հիմքում ուսուցման կոլեկտիվ եղանակի (ՈՒԿԵ-ի)

հայեցակարգային դրույթներն են: Մոդելը նախապես մշակվել, ապա իրականացվել է Սպարտակ Մկրտչյանի անվան «Բյուրակն» կրթահամալիրի տարրական թևում (6-ից 9 տարեկան աշակերտներից կազմված 48 հոգանոց տարատարիք, տարամակարդակ խմբում), որից հետո արդյունքների վերլուծության հիման վրա կրկին վերամշակվել է:
Մոդելն իրականացվել է «Մայրենի», «Մաթեմատիկա» և «Ես և շրջակա աշխարհը» առարկաների շրջանակներում:

Ներկայացվել են մոդելի կառուցվածքային առանձնահատկությունները (գծապատկեր 1), իրականացման ընթացքում առաջացած խոչընդոտներն ու դժվարությունները, դրանց հաղթահարման ուղիները, ինչպես նաև ներկայացվել են մոդելի արդյունավետությունը հիմնավորող գործնական փաստեր:
Ըստ մոդելի՝ առանձնացրել ենք ուսումնական գործընթացի կազմակերպման երեք փուլ՝

- հայտորոշիչ (դիագնոստիկ),
- հիմնական,
- ավարտական (քննական):

Առաջին փուլում, նախօրոք մշակված գործիքակազմի միջոցով (թեստեր, զրույցներ, հարցումներ, փորձարարություններ և այլն), իրականացվել է յուրաքանչյուր աշակերտի գիտելիքների համակարգում, կարողությունների, հնարավորությունների և այլ անհատական առանձնահատկությունների բացահայտում, կարիքների վերհանում, որոնց արդյունքների հիման վրա կազմվում է տվյալ աշակերտի անհատական ուսումնական պլանը՝ համապատասխան ժամանակացույցերով, ձևերով, մեթոդներով, երթուղիներով և այլն: Միայն դրանից հետո աշակերտը կարող է անցում կատարել հաջորդ փուլ:

Երկրորդ փուլը ենթադրում ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի կողմից մայրենի, մաթեմատիկա, ես և շրջակա աշխարհը առարկաների ամբողջական ծրագրի յուրացում, համապատասխան որակների ձեռքբերում ՝ իր անհատական ուսումնական պլանի համաձայն:

Ուսուցման գործընթացն իրականացվել է կոլեկտիվ ուսումնական պարապմունքների միջոցով, որտեղ ուսումնական գործընթացը կառուցվում է ուսուցման կազմակերպչական բոլոր չորս ձևերի կիրառմամբ, սակայն առաջատարը՝ կոլեկտիվ ձևն է (հաղորդակցություն խմբում՝ փոփոխական կազմով զույգերով):

Ընդ որում, երկրորդ փուլն իրականացվել է երկու ենթափով.

- նախնական,հարմարման,
- կայացման:

Երրորդ փուլը նախատեսվել է արդեն իրականացված ծրագրի ամփոփիչ աշխատանքների համար: Երկրորդ փուլից երրորդին անցնելու գործընթացը նույնպես անհատական բնույթ է կրում: Ընդ որում, աշակերտը կարող է մի առարկայի շրջանակում սահմանված և պլանավորված գործընթացը որոշակի

ժամանակահատվածում լիարժեքորեն ավարտին հասցնելուն զուգահեռ՝ մյուս ուղղություններում դեռ շարունակել իր գործունեությունը: Տվյալ պարագայում, կազմակերպվում է առարկայի քննման միջոցառում, որից հետո տվյալ աշակերտի համար համապատասխան առարկայի շրջանակներում պլանավորվում և ծրագրվում է հետագա գործունեությունը (եթե առարկան նախատեսված է նաև կրթական հաջորդ աստիճանում):

Մոդելի իրականացման աշխատանքների վերլուծության արդյունքում, կարող ենք պնդել, որ տվյալ մոդելն էապես ապահովում է ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի համար արդյունավետ կազմակերպվող ուսումնական գործընթաց և ոչ միայն տեսականորեն, այլև գործնականում համապատասխանում է ՀՀ պետական չափորոշչային պահանջներին և ապահովում է անհատական մոտեցման սկզբունքի լիարժեք իրականացման հնարավորություն:



Գծապատկեր 1. Տարրական դպրոցում անհատական մոտեցման սկզբունքի իրականացմամբ արդյունավետ ուսուցման գործընթացի կազմակերպման մշակված մոդելի կառուցվածքը

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անհատական մոտեցման սկզբունքի և դրա իրականացման հինահարցերի վերաբերյալ մանկավարժագիտական գրականության, ինչպես նաև հիմնախնդրի լուծմանն ուղղված նորարարական մոտեցումների ուսումնասիրության, մեր կողմից տարրական դպրոցի ուսուցիչների շրջանում իրականացված հետազոտության, տարրական դպրոցում դիտարկվող սկզբունքի իրականացման դժվարությունների հաղթահարմանն ուղղված ուսուցման գործընթացի կազմակերպման արդյունավետ մոդելի մշակման և ներդրման արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ.

1. Կրթական համակարգի զարգացման խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է ուսուցման սկզբունքները տարանջատել ըստ բնույթի: Ելնելով մեր այս հայեցակարգային մոտեցումից՝ առաջադրվել է ուսուցման սկբունքների նոր դասակարգում, որի համաձայն սկզբունքները լինում են՝ համընդհանուր, համակարգային կամ համակարգաստեղծ:

2. Ճշգրտել ենք մեր մոտեցումներն «ուսուցման սկզբունք», «տարբերակված ուսուցում» հասկացությունների վերաբերյալ և նորովի ենք սահմանել «անհատական մոտեցման սկզբունք» և «ուսուցման անհատականացում» հասկացությունները.

«Ուսուցման անհատական մոտեցման սկզբունքը ենթադրում է ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպում ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի համար, ինչն էլ իր հերթին ենթադրում է ուսուցման մյուս սկզբունքների, հոգեբանամանկավարժական տեսություններում առաջ քաշվող դրույթների անհատականացված իրականացում:

«Ուսուցման անհատականացումն» անցումային գործընթաց է՝ գործող (դաս-դասարանային) համակարգից անցում դեպի ուսուցման այնպիսի համակարգի, որտեղ առկա են բոլոր անհրաժեշտ և բավարար մանկավարժական պայմաններն՝ ուսուցման անհատական մոտեցման սկզբունքի լիարժեք իրականացումն ապահովելու համար:

3. Անհատական մոտեցման սկզբունքը ոչ համընդհանուր, ոչ էլ համակարգային, այլ՝ համակարգաստեղծ է և այն լիարժեքորեն կարող է իրականացվել համապատասխան համակարգի (ոչ դաս-դասարանային) կառուցվածքային առանձնահատկությունների ապահովման պայմաններում: Ժամանակակից մանկավարժների կողմից անհատական մոտեցման սկզբունքի իրականացմանն ուղղված և որպես տվյալ հիմնախնդրի լուծման միջոց դիտարկվող գրեթե բոլոր մոտեցումներն իրականացվում են դաս-դասարանային համակարգի շրջանակներում, ինչի հետևանքով դրանց կիրառման պայմաններում ապահովվում է անհատական մոտեցման սկզբունքի մասնակի իրականացում, որտեղ սկզբունքն իրականացնող սուբյեկտն ուսուցիչն է: Արդյունքում, դրանցից ոչ մեկն անհատական մոտեցման սկզբունքի

իրականացման հիմնախնդրի լուծման միջոց չէ և չի կարող լինել՝ գործող համակարգի կառուցվածքային առանձնահատկություններով պայմանավորված մի շարք էական սահմանափակումների առկայության հանգամանքներում:

4. Անհատական մոտեցման սկզբունքից բխող ուսուցման գործընթացին ներկայացվող մեր կողմից մշակված հիմնական պահանջների բավարարումը ենթադրում է ոչ միայն համակարգային, այլև ուսուցիչների, մանկավարժագետների մանկավարժական մտածողության փոփոխություն՝ գործունային և դիդակտիկական մակարդակներում:

Ընդ որում, կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հայեցակարգային դրույթները լիովին ապահովում են անհատական մոտեցման սկզբունքի իրականացմանը համապատասխան համակարգի ստեղծման համար անհրաժեշտ և բավարար հիմնական պայմանները:

5. Ելնելով վերոնշյալից և համարելով, որ անհատական մոտեցման սկզբունքն իր բնույթով համակարգաստեղծ է՝ մշակել ենք տարրական դպրոցում ուսուցման գործընթացի կազմակերպման նոր մոդել, որը կարող է հիմք լինել անհատական մոտեցման սկզբունքի լիարժեք իրականացումն ապահովող ուսուցման նոր համակարգի կառուցման համար, ինչն էապես կնպաստի անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնախնդրի հանգուցալուծմանը:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի ներքոնշյալ աշխատանքներում.

1. Բաղոյան Ն.Ա., Մկրտչյան Վ.Ջ., Չորրորդ դասարանի մաթեմատիկայի ուսուցումը՝ ըստ սովորողների անհատական աշխատանքային պլանների, Մաթեմատիկական կրթություն: Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու: ՀԱՊՀ, «Ճարտարագետ», Երևան, 2016թ.114-119 էջ:

2. Մկրտչյան Վ.Ջ., Ներառական կրթության կազմակերպման հիմնախնդիրները դաս-դասարանային համակարգի պայմաններում/ տարրական դպրոց/,Մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները տարածաշրջանային միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու. -Երևան: <<Զանգակ>> հրատ., 2015թ.,139-143 էջ:

3. Մկրտչյան Վ.Ջ., Ուսուցման անհատական մոտեցման սկզբունքը և դրա իրականացման հիմնախնդիրները, Նոր կրթական իրողության կայացման հիմնարար հարցերը միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, երկրորդ մաս, «Աստղիկ գրատուն», Երևան, 2018թ. 38-46 էջ:

4. Մկրտչյան Վ.Ջ., Ուսուցման սկզբունքների դերն ու նշանակությունը կրթական համակարգի զարգացման խնդիրներում, Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ ամսագիր, 2 (15), Երևան, 2019թ. 402-407 էջ:

5. Մկրտչյան Վ.Ջ., Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնահարցերը, «Բանբեր Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի», №2 (59). Երևան, «Լինգվա» հրատ., 2022թ. 54-67 էջ:

6. Мкртчян В.Д., Коллективные учебные занятия как способ решения задач инклюзивного образования, Труды международной конференции- Горис, 2015, 134-138 с.

7. Мкртчян В.Д., Принцип индивидуального подхода обучения и проблемы его реализации, Коллективный способ обучения научно - методический журнал, Красноярский край, №18 ,2018 г. 19-25 с.

8. Мкртчян В.Д., Суть понятий "принципа индивидуального подхода", "индивидуализированного обучения", "дифференцированного обучения" и их действенные связи, Актуальные научные исследования в современном мире // Журнал - Переяслав, 2022. - Вып. 4(84), 146-151 с.

9. Мкртчян В.Д., Основные требования вытекающие из принципа индивидуального подхода в образовательном процессе, Актуальные научные исследования в современном мире // Журнал - Переяслав, 2022. - Вып. 4(84), 152-157 с.

МКРТЧЯН ВАРДИТЕР ДЖАНИБЕКОВНА

ТРУДНОСТИ РЕАЛИЗАЦИИ ПРИНЦИПА ИНДИВИДУАЛЬНОГО ПОДХОДА И ПУТИ ИХ ПРЕОДОЛЕНИЯ В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01- "Теория и история педагогики".

Защита диссертации состоится 27-ого октября 2022г. в 12:00 на заседании специализированного совета 020 "Педагогика" ВАК РА (Высший аттестационный комитет) при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна.

Адрес: 0010, Ереван, ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования: реализация принципа индивидуального подхода является одним из приоритетных вопросов повышения эффективности обучения в общеобразовательной школе.

В современных общеобразовательных школах реализуется классно-урочная система, основанная Я.А. Коменским, но в то же время педагоги предлагают новые подходы организации учебного процесса, технологии. При этом они отмечают, что благодаря этим инновациям появится возможность в какой-то мере учитывать индивидуальные особенности участников учебной группы. Очевидно, что если бы классно-урочная система действительно удовлетворяла требование реализации принципа индивидуального подхода, то в педагогике не

придавалось бы столько значений инновациям, направленных на реализацию этого принципа, литература постоянно не дополнялась бы различными теоретическими положениями, обосновывая их продуктивность. Однако следует отметить, что даже после применения всего этого в классно-урочной системе, проблема принципа индивидуального подхода до сих пор не решена.

Очевидно, что, несмотря на осознание педагогами необходимости и важности реализации вышеуказанного принципа, все еще есть много трудностей, препятствий, которые почти не исследованы и не обнаружены. Следовательно пути их преодоления еще не разработаны, что по существу не позволяет в полной мере реализовать этот принцип в начальной школе. Последнее делает выбранную тему более актуальной.

Цель исследования: выявление трудностей реализации принципа индивидуального подхода в начальной школе и выдвижение путей их преодоления.

Задачи исследования:

1. изучить и проанализировать армяно-зарубежную научную литературу по данному вопросу, мировой опыт направленный на реализацию принципа индивидуального подхода, инновационные подходы и выяснить возможности и ограничения их реализации в начальной школе.
2. Изучить, уточнить и по-новому определить понятия: “принцип обучения”, “принцип индивидуального подхода к обучению” и “индивидуализация обучения”.
3. Выявить основные трудности реализации принципа индивидуального подхода в начальной школе и представления, мнение учителей к трудностям реализации данного принципа и к используемым подходам.
4. Изучить и просветить возможности коллективных учебных занятий в начальной школе в рамках реализации принципа индивидуального подхода.
5. Разработать в начальной школе и внедрить эффективную модель преодоления трудностей реализации принципа индивидуального подхода к обучению.

Научная новизна исследования:

1. выдвинута новая классификация принципов обучения по характеру.
2. Уточнены и переопределены понятия “принцип индивидуального подхода к обучению” и “индивидуализация обучения”.
3. Выявлены основные трудности реализации принципа индивидуального подхода, исходное препятствие, характер и субъект его реализации, возможности инновационных подходов к реализации данного принципа.
4. Предъявлены основные требования к организации учебного процесса, вытекающие из принципа индивидуального подхода и выявлены возможности коллективных учебных занятий в рамках реализации вышеуказанных требований.
5. Разработана и внедрена эффективная модель организации учебного процесса с применением принципа индивидуального подхода в начальной

школе.

Теоретическое значение исследования. Полученные в результате исследования данные и сделанные на их основе выводы, определения и рекомендации по-новому затрагивают проблему и могут способствовать развитию педагогической науки, дополняя ее новыми дидактическими знаниями, методологическими подходами и теоретическими положениями.

Практическое значение исследования. Выявление исходных вопросов и особенностей проблемы реализации принципа индивидуального подхода, выявление ограничений и возможностей существующих подходов, предлагаемых решений, разработанных положений и представленной модели может оказать практическую помощь деятельности педагогов, ученых, образовательных учреждений и других субъектов.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложений. Объем диссертации составляет 112 страницы компьютерного текста.

По теме диссертации опубликовано 9 статей.

MKRTCHYAN VARDITER J.

Difficulties of Implementing the Principle of Individual Approach and Ways to Overcome them in Primary School

The abstract of the dissertation for the degree of Candidate of Pedagogical Sciences in speciality 13.00.01- “Theory and History of Pedagogy”.

The defense of the dissertation will take place on October 27, 2022, at 12:00 p.m., at the session of the Special Board 020 “Pedagogy” SCC RA (Supreme Certifying Comittee) at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.

Address: RA, 0010, Yerevan, Tigran Mets Ave 17.

SUMMARY

The relevance of the research: The implementation of the principle of an individual approach is one of the primary issues of improving the effectiveness of instruction in a general education school.

In modern general education schools a lesson-classroom system founded by J. A. Comenius is being implemented, but at the same time, pedagogues offer new approaches to organize the learning process and technologies. Moreover, the authors note that thanks to these innovations, to some extent, it will be possible to take into

account the individual characteristics of the participants in the instruction group. It is obvious that if the lesson-classroom system really met the requirements for implementing the principle of an individual approach, then in pedagogy innovations aimed at implementing this principle would not be so much valued, the literature would not be constantly supplemented with various theoretic provisions, substantiating their effectivity. However, it should be noted that even after applying all this in the lesson-classroom system, the problem of the principle of an individual approach has not yet been resolved.

It's obvious that, despite the awareness by educators of the need and importance of the implementation of the above-mentioned principle, there are still many difficulties, obstacles that are almost not explored and discovered, therefore, ways to overcome them have not yet been developed, which essentially does not allow the principle to be fully implemented in the RA primary school. The latter makes the chosen topic more relevant.

The aim of the research is identifying the difficulties of implementing the principle of an individual approach in elementary school and putting forward ways to overcome them.

The objectives of the research are:

1. To explore and analyze of Armenian and foreign scientific literature on this issue, world experience at implementing the principle of an individual approach, innovative approaches and clarify the possibilities and limitations of their implementation in primary school.
2. To research, clarify and in a new way define the concepts of "principle of learning", "principle of an individual approach of learning" and "individualization of instruction".
3. To discover the main difficulties of implementing the principle of an individual approach in elementary school and the views and opinions of teachers to the difficulties of implementing this principle and to the approaches used.
4. To investigate and explain the possibilities of collective learning-trainings in primary school towards the implementation of the principle of an individual approach.
5. To develop and implement in primary school an effective model for overcoming the difficulties of implementing the principle of an individual approach to instruction.

Scientific novelty of the research:

1. A new classification of the principles of instruction according to the character was put forward.
2. The concepts of "principle of an individual approach to instruction" and "individualization of instruction".
3. Have been clarified and redefined the main difficulties of implementing the principle of an individual approach, the initial obstacle, the character and entity of its implementation, the possibilities of innovative approaches to the implementation of

this principle are identified.

4. The main requirements for the organization of the teaching process, that come from the principle of an individual approach have been propounded and the possibilities of collective teaching-trainings have been identified as part of the implementation of the above-mentioned requirements.

5. An effective model for organizing the educational process using the principle of an individual approach has been developed and implemented in elementary school.

Theoretical significance of the research: The data obtained as a result of the research and the conclusions made on their basis, definitions and recommendations touch the problem in a new way and can contribute to the development of pedagogical science, supplementing it with new didactic knowledge and theoretical provisions.

Practical significance of the research: Identification of the initial issues and features of the problem of implementing the principle of an individual approach, identifying the limitations and possibilities of common approaches, proposed solutions, developed provisions and the presented model can provide practical assistance to the activities of pedagogues, scientists, educational institutions and other entities.

The structure and volume of the research: The dissertation paper consists of Introduction, three chapters, Conclusion, Bibliography and Appendix. The volume of the dissertation paper is 112 pages of computer text.

Nine published articles cover the topic of our dissertation paper.